ԹԵՄԱ 1 ԵՎՐՈՊԱ

ԴԱՍ 1.10. Հարավային Եվրոպա: Մնտեսությունը

Համաշխարհային ճանաչում ունեն իտալացի գիտնականներ ֆիզիկոս Գալիլեո Գալիլեյը, ֆիզիկոս և քիմիկոս Ավոգադրոն, ճանապարհորդներ Քրիստափոր Կոլումբոսը, Ամերիգո Վեսպուչին, Մարկո Պոլոն: Վերածնունդի ժամանակաշրջանում ապրեցին և արարեցին Լեոնարդո դա Վինչին, Միքելանջելոն, Ռաֆայելը, իտալերեն գրական լեզվի ստեղծող, բանաստեղծ Դանթե Ալիգիերին, գրականության դասականներ Ֆ. Պետրարկան և Ջ.Բոկաչոն, գեղանկարչության իտալական արվեստի հեղաշրջող Ջոտտոն: Աշխարհահռչակ նեապոլյան օպերային դպրոցի հիմնադիր Ա. Սկարլատտին, Ա. Վիվալդին: Համաշխարհային ճանաչում ունեն Ջ. Ռոսսինին, Ջ. Վերդին, Վ. Բելլինին, Գ. Դոնիցետտին, վոկալ կատարողներ Բ. Ջիլին, Է. Կառուզոն, Լ. Պավառոտտին, դերասաններ Սոֆի Լորենը, Կլաուդիո Կարդինալեն, Ադրիանո Չելենտանոն և բազում ուրիշներ:

Իսպանիան հարուստ գրականություն, արվեստ ու մշակույթ ունեցող երկիր է: Համաշխարհային ճանաչում ունեն գրողներ Լոպե դե Վեգայի, Մ. Սերվանտեսի, Ֆ.Գարսիա Լորկայի, նկարիչներ Դ. Վելասկեսի, Ֆ. Գոյայի, Սալվադոր Դալիի, Պ.Պիկասոյի գործերը: Համընդհանուր ճանաչում ունեն վոկալ կատարողներ Ս. Դոմինգոն, Խ. Կարերասը, Մոնսերատ Կաբալյեն, ով երկու անգամ համերգային ծրագրով այցելեց ՀՀ և Արցախ՝ երգելով նաև հայերեն:

Աստղագիտության և մեխանիկայի բնագավառում աչքի են ընկել Էվկլիդեսը, Արքիմեդը փիլիսոփայության մեջ՝ Թալեսը, Դեմոկրիտը, Սոկրատեսը, Պլատոնը, մաթեմատիկայում՝ Պյութագորասը, բժշկապետ Հիպոկրատը, աստղագետ, աշխարհագետ Պտղոմեոսը, «աշխարհագրության հայր» Էրատոսթենեսը, «քարտեզագրության հայր» Պտղոմեոսը, պատմահայր Հերոդոտոսը, գրականության մեջ անգերազանցելի Հոմերոսն ու Էսքիլեսը, քանդակագործության մեջ՝ Ֆիդիասը: